

ՓՈՐՁ ՄԸ «ՀԱՐԻԻՐ» ՐԱՌԻՆ ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒԹՅԱՆ

ՖԻՆԴԵՐՈՎ ՖԵՏԻ (Ֆրանսիա)

Պահ մը մոռնանք, որ հայերենը հնդեվրոպական լեզուներուն satəm¹ խումբին կապականի և կամ, ավելի, ենթադրենք, որ բացառաբար, հարյուր թիվը նշանակող բառին համար, հայերենը հնդեվրոպական *k միջնաքմային խուլը շփոթած է հտնաքմային *K խուլին հետ, ծնունդ տալով *k'and ձևի մը (Ս ձայնեղ բաղաձայնով Պ նային հտնը, հմմտ. լատ. antae, հայ. դր-անդ)։ Այս ենթադրությունը կրնա հենվիլ Բրուգմանի ըսածին վրա թե՛ «satəm խումբին մեջ հաճախ կդտնվին հնդեվրոպական քմային *K ներկայացնող ձևերու կից ուրիշ ձևեր, զորս կարելի չէ անոնցմե անջատել և որ իրենց խումբին հատուկ հանգամանքներուն նկատմամբ կթվին ներկայացնել հնդեվրոպական հտնաքմայիններու։ Այս ձևերը երկու դասակարգի կրածնվին. ա) որոշ պարագաներու մեջ քմայինները և հտնաքմայինները ձայնաբանորեն կշփոթվին...»։ Թույլ տվեք որ առժամապես այս առաջին հնարավորությունը մեջբերելով բավականանամ։

Առաջին փուլով գոյացած *k'and ձևին Բ շնչեղ խուլին փակվածքը կթուլնա և պայթականը կվերածվի կոկորդային խուլ շփական հնչյուն և-ի, առաջ բերելով hand նոր ձև մը։ Սկզբունքով, հայերեն Բ հնչյունը տոկուն է սակայն, եթե հնդեվրոպական *qu-են սերած Բ-ն անայլայլ կմնա Բան բառին մեջ, և-ի կվերածվի ի- դերանունին տրականի հիմ ձևին մեջ ի առաջավոր ձայնավորին առջև, հավանորեն այս ձայնավորին մոտիկության պատճառով քմայինացած ըլլալուն համար։ Արդ, ենթադրված ձևին Բ-ն հնդեվրոպական քմային բաղաձայնի մը այլափոխումն է. ուստի այս պարագային ալ Բ-ն կրնա և-ի վերածվի։

Որոշ պարագաներուն, որ տակավին ճշգրտությամբ չեմ կրցած որոշել, բայց հաճախ Բ հնչյունեն առաջ, կարելի է նշմարել և և ատամնային բաղաձայնի կապակցության վերածվիլը յ-ի, հավանորեն հի բարդ հնչյունին միջնորդությամբ։ Այսպես, օրինակի համար, հունարեն անէր (άνηρ) բառեն մինչև հայերենի զուգահեռ այլ բառը հավանական են հետևյալ միջանկյալ ձևերը.

անը անդը (հենարանով), ահը, այը, այր։ Լատ. ante-um, հուն. ἀντι- առդեն կես ճամբուն վրա են դեպի հալ. [բար]այլ։ Հալ. մայրի հավանորեն պետք է մոտեցնել հուն. μᾶτρη-ի, որ կնշանակե փալ վայր, գոմ։ Երկրորդ փուլին հանդ ձևը այս պայմաններով պիտի ներկայանար հալ ձևով։ Եվ հանդ-բուր պիտի դառնար հայ-բուր։

Արևմտահայերուն մեջ հաճախակի կգործածվի սխալ համարված հայրուր-ձևը փոխանակ հաբյուրի։ Սխալ կհամարվի, որովհետև արևմտահայերենը իբրև ուղիղ ձևեր կձանչնա բառերուն միայն գրաբարյան կերպարանքը։ Կրնա սակայն զավառաբարբառային ձև ըլլալ և երբեմն զավառաբարբառներուն մեջ կգտնվին ձևեր, որ գրաբարյան ձևերեն ավելի հարազատ են. օր. լապսդրակ բառը, որ շատ ավելի մոտիկ է լատ. lepus, սեռ. leporis կամ էոլերեն λεπορις, λεποριος, քան գրաբարյան նապաստակը։ Շամախիի և Երևանի արդի բարբառներուն մեջ տակավին կգործածվի անուն բառին համար անըլ ձևը, որ նախապատմական շրջանին ձևին բաղաձայնական կմախքը անայլայլ պահած է։ Եթե հայրուր ձևը ընդունինք ոչ իբրև սխալ այլ իբրև վաղեմի ժամանակին ավանդված զավառաբարբառային ձև, հանդ ձևին վերածիլը հայ ձևին կարդարացվի, մանավանդ Բ-ի առջև և հայրուր բաղադրյալ բառ մըն է, որուն երկրորդ կեսը Բ-ով կսկսի. հետևաբար, հաբյուր դասական ձևը արդյունք էլլալ։

կամ դրափոխության (hayrur/haryur) և կամ հեռավոր տարեմասնության հեռանալով առաջին y-ին սղումի (hayryur/haryur):

Տարիներ առաջ արդեն հասած էի մասնակի այս եզրակացության. բայց կամար... մնացածը ստուգաբանել:

Հաջորդ բաղադրյալ բառին երկրորդ տարրը ածանց չէ, այլ իսկական բառ: Այս երկրորդ բաղադրիչը մեզի կներկայանա -րյուր կամ -րուր կերպարանքով: Մեկը ըլլա, մյուսը ըլլա, կմնա որ ձայնավորին կհետևի -ւր- (wr) հնչյունականացությունը, որ կրնա սերիլ հնդեվրոպական -ւր- հնչյունականացությունն, ինչպես հաւր- patr-ն կամ աւաւր aratr-ն: Կարելի է անգամ այս երկուքին ավելցնել նաև հուն. πατήρ, հայ. մաւրու, հուն. πατήρ, հայ. աղաւրի. նախատիպերը գտնվելով մասնավորապես հունարենին մեջ և հարակցաբար լատիներենին մեջ: Այս ենթադրությամբ, սկզբնական ձևը ըլլալու էր կամ ritr կամ roir:

Նորին երկար տարիներ այս երկրորդ բառին ինքնությունը անլուծելի առեղծված մնաց ինծի համար: (Եվ այսօրվան առաջարկած բացատրությունս կարելի է որ բոլորովին սխալ ալ ըլլա): Այս խնդրին վրա անվերջ խոհալուով, օր մը միտքս եկավ հունարեն ἐρυθρός բառը, որոնք քով գրքերուն մեջ գտա սանսկրիտ. rudhiras, լատ. ruber և այլն: Սակայն ատամնային բաղաձայնին աստիճանը դժվարություն կհարուցաներ: Վերջին օրինակներուն մեջ, ատամնային բաղաձայնը շնչեղ ձայնեղ է, մինչդեռ վերականգնած ձևերու մեջ պարզ խուլ է: Բայց Բրուգման իբր հնդեվրոպական վերջածանց կմեջբերե՝ *-dhro և *-tro զիրար փոխարինող ձևերը, ինչ որ կրնա նշանակել, որ r նային առջև խուլը կրնա շնչեղ ձայնեղի տեղ անցնիլ: Եվ բաղադրյալ բառը պիտի նշանակեր հարյուր-կարմիր:

Կարմիր գույնին գաղափարը ի՞նչ գործ ունի այստեղ: Եվ կամ այս տարօրինակ բաղադրությունը ինչպե՞ս կարելի է բացատրել: Հետևյալ ձևով թերևս: Օրը որ բազմահարյուր առարկաներ համրելու խնդիր է, նախընտրելի է երկու հոգիներու գործակցությունը. մեկը առարկաները կհամրե, մյուսը գրի կառնե, յուրաքանչյուր տասնյակին համար գիծ մը գծելով: Բայց, եթե այն նյութը, որուն վրա կգրվի, ամբողջովին ծածկված է գծերով, այլևս անվերծանելի կդառնա համարագրությունը: Շփոթութենե խուսափելու նպատակով, տասնյակին տասնյակը նշանակելու համար գործածվեցավ կարմիր գիծ մը կամ կարմիր որևէ նշան մը և գրողին ուշադրությունը արթուն պահելու համար համրողը կգոչեր հարյուր... կարմիր: Եվ այսպես սովորություն եղած ըլլալու է հարյուր բառին կարմիր բառը կցել: Կարմիր գույնը հարյուրյակի խորհրդանշանը եղավ ինչպես որոշ տեղեր ճեղքը (score) սքօրը՝ քսանյակի:

Այս բոլորով ո՞ր պիտի հանգիմ վերջապես: Գերմանական լեզուներուն մեզի ծանոթ ամենահին բառը բարդ բառ մըն է, որուն առաջին բաղադրիչը hund հնդեվր. *k'mtom-ի ձևափոխում ըլլալով հարյուր կնշանակե, իսկ երկրորդ մասը կհամարվի սովորաբար համարել-հաշվել նշանակող հնդեվրոպական բառին բառարմատ: Բնականաբար անգլիներեն hund-red բառը, կարմիր գույնին գաղափարը արտահայտող red բաղադրիչով ինծի ավելի հարազատ կթվի: Ուրեմն անգլիներենի մեջ ալ հարյուր... կարմիր բաղադրությունը կգրտնրվի: Տարօրինակ գուգադիպություն... եթե իրավ գուգադիպություն է:

Ստույգ ըսեմ, որ անգլիներենի հանգեցա, ոչ թե զայն իբրև ելակետ զործածեցի:

Բրուգմանի գրքեն քաղած մեջբերումիս մեջ հիշեցի հեղինակին միայն առաջին ենթադրությունը, որ էր հնդեվրոպական քմայինի և հտնաքմայինի հավանական շփոթությունը սաթըմ խումբին լեզուներու կողմի: Հիմա, սկսած մեջբերումս շարունակեմ. ահա ուրեմն երկրնտրանքին երկրորդ հնարավորությունը. «բ) ուրիշ պարագաներու մեջ կրնա ըլլալ, որ centum խումբն փոխ առնված բառեր ըլլան. այսպիսի փոխառություններ կրնալով տեղի ունեցած ըլլալ հնդեվրոպական շրջանին իսկ: Եվ ահավասիկ երկրորդ հնարավորություն մը հայերենը գերմանական լեզուներուն մոտեցնելու այս խնդրին մեջ:

Գիտեմ որ *k'mtom-ի և rudhiras-ի հնդեվրոպական բառարատներուն բաղադրութենեն մինչև հալ. hauriour ձևը ասնող ճասփանքիչ մը խոտորկոտոր է, բայց աղբյուր և եղբայր բառերուն անհրաժեշտ ստուգարանությունները ազնվոր ուղղակի են արդյոք: Իսկ երկու և հարակից բառերուն ստուգարանությունները: Կարծեմ որ hundred բառին վկայությունը աննշտաբ չի կրնար մնալ:

Բրուգմանի երկրնտրանքին լուծումը հնդեվրոպական լեզուներուն մասնադեպներուն կձգեմ:

ОПЫТ ЭТИМОЛОГИИ АРМ. hariwr «СТО»

ФРЕДЕРИК ФЕИДИ (Франция)

Резюме

Занадноарм. форма haugur арм. слова «сто» считается в статье первоначальной, а классическая форма hariwr—происшедшей в результате метатезы или диссимилиации с выпадением первого у (haugur/haryur). Арм. hariwr рассматривается как сложное слово, вторая часть которого -gaur или -gur восходит к *ritr- или *rotr-: слово в целом получает этимологию «сто—красный», от восклицания при счете, подобно англ. hund-red.